կերի և նկարու , և ըստ այնմ արարեալ քրիստոնէից , ա-
ւարտեցին զգործն · (1720) ։ Ի ժամանակս Նորոգութեան
տաճարին Ս · Յարութեան եկեալ էին յԵրուսաղէմ յայլ
և այլ կողմանց մշակք և արհեստաւորք սակս աշխատելոյ
'ի գործ շինութեան , որք մեծաւ մասամբ էին յազգէ Հա-
յոց , եւ մինչ աշխատէին 'ի միջի մեծի դմբեթին , մի ոմն
'ի նոցանէ Տէվլէթ անուն անկաւ գահավէժ 'ի փայտակեր-
տէ անտի և անմիջապէս աւանդեաց զհոգին ։ Իսկ թարգ-
մանն Լատինաց Մանսուր ազգ արար դատաւորի քաղա-
քին · եւ զկնի քննութեան հրամանաւ նորին բարձեալ
թաղեցին ։

Այն ինչ 'ի գլուխ ելեալ էր քննութիւն նորոգեալ տե-
ղեաց , եհաս հրովարտակ առ դատաւորն Երուսաղէմի , զի
Գրիգոր եւ Յովհաննէս Պատրիարքունք եւ բազմութիւն
եկեղեցականացն Հայոց՝ 'ի Կոստանդինուպոլիս , բողոք
բարձեալ 'ի Դուռն ամբաստան լեալ էին զՊատրիարքէն
Յունաց , զի 'ի նախընթաց ամին արգելեալ էր նա զՀայս
մտանելոյ 'ի Գերեզմանն Քրիստոսի՝ յերեկոյի Ճրագալուցի
Զատկին ։ Եւ 'ի հրովարտակին պատուիրէր Արքայ ստու-
գութեամբ քննել զխնդիրն 'ի դատարանի և ծանուցանել
'ի Դուռն ։

Իսկ զթարգմանութիւն աղերսագրոյն զոր մատուցին
Գրիգոր և Յովհաննէս՝ զետեղեմք աստանօր ։ Յերուսաղէմ
'ի տաճարին Ս · Յարութեան , ուր է Գերեզմանն Քրիստո-
սի , 'ի ներքոյ փոքր դմբեթին , սովորութիւն էր 'ի սկզբան-
նէ և այսր Հայոց և Յունաց 'ի միասին կատարել զհանդէս
Լուսաւորութեան և Թափօրի ։ Զի յերեկոյին յայնմիկ այ-
լազգի դռնապանք տաճարին , ըստ սովորութեան բանան
զդուռն Գերեզմանին , Պատրիարքունք Յունաց և Հայոց և
կամ Փոխանորդք նոցին 'ի միասին մտեալ 'ի ներքս լու-
ցանէին զմոմս , և ապա հետեւակք երկուց ազգաց , 'ի նո-
ցանէ , եւ չէր ինչ լեալ հակառակութիւն , եւ ոչ երբէք
լուեալ էր՝ թէ Հայք դիմեալ են առ Պատրիարքն Յունաց ,
զի 'ի միասին մտեալ կատարէին զօրէնս , և այսմ գիտակ
իսկ են բնակիչք Երուսաղէմի ։ Քանզի Յոյնք յառաջագոյն
յարուցին վէճս վասն այսր խնդրոյ · պատճառելով թէ
Հապէշք մի մոցեն յառաջ քան զմեզ , և 'ի դատաստանին